

Հայերն զիմումը

ՍԱՆ ՅԻՐԱՆՍԻՍԻՅՈՒՆԻ ԺՈՂՈՎԷՆ

ՍԱՆ ՅԻՐԱՆՍԻՍԻՅՈՒՆ 10.— Յրանսական Մ. Վլոյ Գործակալութեան թղթակիցը կը տեղեկացնէ որ Ամերիկահայ Ազգային Աորհուրդը, Սան Յրանսիսթոյի խորհրդաժողովին քարտուղարութեան յանձնեց յուշագիր մը, պահանջելով որ սփիւռքի մէջ ցերեցան մէկուկէս միլիոն Հայերը կարենան վերստին ալ Հայաստան (Թուրք հողամաս), և հոն ապրին, Սովիէթ Հայաստանի Հանրապետութեան իրենց հայրենակիցներուն հետ, ազգային ամբողջութեան մը շրջանակին մէջ:

* Ասիկա ամփոփումն է անշուշտ յուշագրին պարունակութեան: Հետագրին պատճենէն այնպէս կ'երևայ որ պահանջուած է Թուրքիայէն հողեր կցել Սովիէթ Հայաստանի, հոն տեղաւորելու համար Սփիւռքի Հայերը: